

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՐՁԵԱԼ ՄԻ ՓԼՍՏ

Դարձեալ մի փաստ մեր հասարակական բարք ու վարքերի ապականութեան և հայ մամուլի անկման: Մի փաստ, որի առջև նսեմանում են և չքանում մարդկային ստոր հակումների շատ խոշոր արտայայտումներ:

Ասպարէզը դարձեալ Բագուն է, հերոսը դարձեալ այն չրջանիցն է, որ մի յանցաւոր թիւրիմացութեամբ ընդունուած է անուանել «ինտելլիգենցիա»:

Պատմենք եղելութիւնը:

Սրանից մի քանի տարի առաջ Բագում տեղական մամուլին մօտիկ անձինք հիմնում են մի ինչ-որ ընկերութիւն և անուանը դնում «Կանանց պաշտպանութեան ընկերութիւն», որի նպատակը պիտի լինէր ազատել վերջնական անկումից այն ողորմելի կանանց, որոնք հանգամանքների շնորհով ակամայ ընկել են անբարոյականութեան գիրկը: Հիանալի նպատակ և գովելի ձեռնարկութիւն: Համայն մարդկութեան լաւագոյն մասն աշխատում է այդ նպատակը իրագործել, չի կարողանում, Բագուի «իտելիգենցիան» յանձն է առնում իրագործել—ինչու չը ծափահարել: Եւ տեղական մամուլը սկսում է այնպիսի ռեկլամներ շուայել մեծանուն ընկերութեան համար, որոնց կարող էր նախանձել մի ամենափայլուն օպերետային աստղ:

Անցնում են քանի տարիներ, ռեկլամները քանի գնում այնքան առատանում են, բայց թէ ինչ է անում ընկերութիւնը, կարողանում է արդեօք գէթ մի էակ ազատել անկման անդունդից, այս դեռ ընկերութեան պատմութեան բարձրագոյն գաղտնիքն է: Մի գեղեցիկ օր ընկերութեան վարչութեան մէջ երևան է գալիս մի ինչ-որ Ռուբէն Յովհանջանեան: Այդ պարոնը «Մշակ» լրագրի գլխաւոր աշխատակից-

ներից մէկն է և այն աշխատակիցներէից, որոնք վերջին տարիները մեր հասարակական բարք ու վարքերի ղեկավարների գերը վերցրել են կապալով: Նորանք այլ կերպ չեն խօսում «բարոյականութեան» մասին, եթէ ոչ փրփրած բերանով և կուրծքները ծեծելով «Մշակ» լրագիրը, որ բաղդ ունի Ռուբէն Յովհանջանեանների հովանաւորութիւնը վայելելու, տպում է «կանանց պաշտպանութեան ընկերութեան» առիթով խորիմաստ յօդուածների մի երկայն շարք ղեկավարութեամբ նոյն Յովհանջանեանցի, որ յանձն է առած լինում ընկերութեան անունը համայն աշխարհին յայտնի կացուցանելու: «Մշակի» ընթերցողները համոզուում են, որ կայ Բագուում մի հիմնարկութիւն, որ շուտով, կարճ միջոցում մեր ժամանակակից Սոցիոմը պիտի մաքրի բոլոր ապականութիւններից և պիտի վերականգնի այնտեղ բարք ու վարքերի կատարեալ մաքրութիւն:

Մինչ «Մշակը» ընկամներ է անում, ընկերութեան մէջ թագուն-թագուն կատարում են սոսկալի դէպքեր: Գուրս է դալիս, որ այն հիմնարկութիւնը, որ կոչուած է անբարոյականութեան դէմ կռուելու, ինքը ամենից աւելի նպաստում է անբարոյականութեան տարածուելուն ղեկավարութեամբ վարչութեան անդամ և քարտուղար Յովհանջանեանցի: Հասարակութիւնը ուշադրութիւն է դարձնում, բարձրացնելով ընկերութեան գաղտնի դործերը ծածկող վարագոյրի մի ծայրը և սոսկումով ու զգուանքով յետ քաշում: Մի քանի պարոններ քաջութիւն են ունենում ընկերութիւնից հաշիւ պահանջելու: Գրննութիւնն է նշանակուում և քննողները պարզում են ընկերութեան վարչութեան մէջ եղեռնագործութեան հաւասար գուցէ աւելի քան ինքը եղեռնագործութիւնը սոսկալի արարքներ: Ընկերութեան հովանաւորութեանը դիմող կանայք ապահովուած չեն լինում վարչութեան, գլխաւորապէս նրա դիրիժօրի Ռուբէն Յովհանջանեանի անկոչ «հովանաւորութիւնից»: Ընկերութիւնն ունի ապաստանարան, ուր ժամանակաւորապէս ընդունուում են «ընկածները» իբրև մի կայարան, ուր նրանք պիտի մաքրուին և վերադառնան օրինաւոր հասարակական շրջանը: Երևակայեցէք, որ այդ ապաստանարանը Ռուբէն Յովհանջանեանի վարչութեան անդամ ու քարտուղար դառնալու օրից սկսում է կատարել... միջնորդի դեր: Թէ ինչ միջնորդի—դուք գուշակում էք... Գննիչ յանձնաժողովը հաստատել է չորս դէպք, երբ Ռուբէն Յովհանջանեանցը ինչոր հարուստ «հովանաւորների»

և ապաստանարանում գտնուող խեղճ էակների մէջ միջնորդի դեր է կատարել, աշխատելով, որ այդ էակները անցնեն հարուստների «հովանաւորութեան» տակ Այս մասին նա ինքն անգամ գրաւոր բանակցութիւն է ունեցել երկու կողմերի հետ:

Գործելով հանդերձ «յոգուտ խեղճերի», պարոնը չի մոռացել և ինքն իրան: Չէ որ նա էլ մարդ է, ունի իւր պահանջները և այն էլ երիտասարդ մարդ: Քննութիւնը պարզել է, որ «Մշակի» բարոյախօսը առանձնապէս հալածել է մի ոմն Բ. ազգանունով աղջկայ, որ, երևի, ապաստանարան մտնողների մէջ, ամենից աւելի գրաւիչն է եղել պարոնի համար:

Ահա ինչպէս են նիւարագրում Բագուի ուսւ լրագիրները այս եղկելի պատմութիւնը:

«Անբարոյական նպատակին հասնելու համար, ասում է «Каси́я» լրագիրը, նա սկսել է վախեցնել ապաստանուած օրիորդ Բ.-ին, սպառնալով ոստիկանութեան ձեռքով նրան քաքտրել Հաշտարխան: Կարգադրել է, որ նրան պահեն ապաստանողներից առանձին և սոված: Հսկողութիւն է նշաւնակել յամառ աղջկայ իւրաքանչիւր քայլի վրայ: Խաւճուել է շնրա մասնաւոր կեանքի մանր բաների մէջ և սկսել է հալածել «մի ուրիշ ապաստանուածի, տիկ. Ե.-ին, երբ սա Բ.-ին ընդունել է իւր ընակարանը՝ ապաստանարանում:

«Երբ այս բոլոր խիստ միջոցները չեն խախտել Բ.-ի բարոյական զարմանալի հաստատակամութիւնը, մեղադրուած «Օգանջանը տակտիկը փոխել է: Նա սկսել է Բ. ին ուղարկել ճքաղցրաւենիք, ծաղիկներ, ձեռնոցներ, անուշահոտ իւղեր և ասիրահարական նամակներ:

«Բ.-ն խիստ միջոցներին դիմացել է, քայք սիրալիւր վարձունքը խախտել է նրա հաստատակամութիւնը: Նա ընդունել է և՛ քաղցրաւենիքը, և՛ ծաղիկները, և՛ ձեռնոցները, և՛ նամակները: Աւելի. նա պատասխանել է պ. Օգանջանի նամակներին և վրդովուած մինչև հոգու խորքը պ. Օգանջանի անբարոյական վարմունքից, ինչպէս ընկերութեան քարտուղարի «և մարդու, համաձայնուել է ընկերութեան բիւրօյում հաշուաւպահի պաշտօնն ընդունել, ուր նա ծառայել է մինչև այն «ժամանակ, մինչև որ հանդիպել է տիկ. Մդիվանին, որ նրա քրիւրօյում ծառայելը համարել է անյարմար:

«Այնուհետև պ. Օգանջանը կուիւ է յայտնել վարչութեան անգամ տիկ. Մդիվանիու գէմ, որ վերահսկել է ապաստանարանի և բիւրօյի գործունէութեանը և յայտնել է այն պատճառով, որ տիկ. Մդիվանին ընդդիմադրել է նրա և Բ.-ի Վերջնական մերձաւորութեանը: Օգանջանօլը իւր ազդեցութեանն է ենթարկել ապաստանարանի տեսչուհուն: Ապաստանարանը նո յաճախել է գիշեր ժամանակ և հար-

բաժնի Յանաճախի է նոյն իսկ այն ժամանակ, երբ կա-
 յայցած էր վարչութեան որոշումը - «Ընկերութեան քարտու-
 դար պ. Օրանջանօվին չը թողնել ապաստանարան»:

Մենք ընդհատում ենք այստեղ տխուր պատմութիւնը,
 առաջ չենք գնում, խնայելով մեր ընթերցողներին համեստու-
 թեան զգացումը:

Առաջ բերելով այս բոլորը, «Ճարագ» շարժաթիւնը
 իրաւամբ կոչում է.

«Այս դէպքը հարիւրաւորներից մէկն է: Ճարիներ չարու-
 ճնակ գտաւ յանուն ազատամտութեան և լինել աւելի խաւար,
 զքան ինք խաւարը, քարոզել համարձակութիւն և հա-
 շարակական անվեհերութիւն և լինել աւելի երկչոտ, քան
 ւսողունը, տղադակել յանուն բարոյակոնութեան և ապականել
 զբարոյականութեան տարրական օրէնքները—այս է պատկերը
 «մի ամբողջ խուժանի»:

Ինչո՞ւ «Ճարագը» չի տալիս այդ խուժանի անունը: Մի-
 թէ այս գաղանֆք է: Մարդիկ իրանք չեն թագցնում իրանց
 մրոտ կերպարանքը և ասպարէզ են գալիս դարձնալ բարձ-
 րաձայն գոռալով: Ռուբէն Յովհանջանեանցի քստմենլի արար-
 քը համարձակօրէն դատապարտեց դրեթէ ամբողջ կովկասեան
 մամուլը, ոչ զք նրան պաշտպանելու չափ չը ստորացաւ: Բացի
 մի հատիկ «Մշակից» և նրա գլխաւոր աշխատակից Լէօնից: Ո-
 րովհետեւ յանցանքը պարզ է լոյսի պէս, հերքել անհնարին է,
 «Մշակը» ճգնում է իւր աշխատակցի կեղտը լուանալ, անուա-
 նել նրա արարքը «թեթևամտութիւն»:

Կարելի է արդեօք աւելի սոսկալի անկման հասնել: Մէկը
 թաւալուում է կեղտերի մէջ, միւսը ճգնում է ազատել նրան և ինքն
 էլ դլորում է: Սակայն մենք չենք զարմանում բնաւ այս հան-
 դամանքի վրայ: Փինաչութիւնը, որ մեզանում ազատամտու-
 թեան դրօշակի տակ է պատսպարուած, աւելի վայելուչ դերի
 ընդունակ չէ: Նրա կոչումն է կարկատել ամեն ինչ և նոր կը-
 տորը յարմարեցել կեղտոտ լաթերին: Այսօր Յովանջանեան-
 ներն և նրանց փաստաբան Լէօներն են ասպարիզում, վաղը
 նրանց կը փոխարինեն ուրիշ համամամանները և այսպէս կը
 շարունակուի մինչև այն ժամանակ, երբ մեր ընկերական
 կեանքի ասպարէզը կը դադարի Լէօներին և Յովանջանեան-
 ներին սննդոդ պաշարը հող դառնալու: Սպասենք այդ ժամանա-
 կին առանց վրդովուելու: Իրանք էլ գիտեն, օր այդ օրը
 գալիս է: